

крестьянская
Газета

ԽՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

741

Ա. ԴԱՆԻԼԻՆ

ՊԱՏԻԹԵՐԹԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՒՍԸ

Զորքով դասախոսություն

ԿՈՆՏՆՏԵՍՏՈՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽԱԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դասախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Հայաստան“-ի պատ. խմբագիր Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ընդհանուր խմբագրությամբ

07

7-18

ՀԿ(Բ)ԿԿԿ հրատարակություն — „Խորհրդային Հայաստան“
Յ Ե Բ Գ Ա Ն 1936

14 657

0507

17

06 JUN 2009

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Դատախոսությունները լույս են ընծայվում «Խորհրդ. Հայաստան»-ի խմբագրության կից կազմակերպված մեքսիկական հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Խոստացանկայա Գազե-սա»-յի ուսումնական կոմբինատի հրատարակած գաղափարա-
քյունները:

Կոլեկտիվային-բրիգադային պատի քերքերի խմբագրության Հա-
յաստանի հեռակա ուսուցման գաղափարների ղեկավար, «Խոր-
Հ.»-ի բանգյուղաբնակիցների բաժնի վարիչ՝ Մ. ՄԱՐՏԻՆՅԱՆ:

ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍ-
ՆՈՒՄ ՀԵՏԵՎԵՍԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ:

ՈՒԿՐԱՅՆԵՐԵՆ,
ԲԵԼՈՐՈՒՍԵՐԵՆ,
ԹԱԹԱՐԵՐԵՆ,
ԿԱԶԱԿԵՐԵՆ,
ՎՐԱՅՆԵՐԵՆ,
ՀԱՅԵՐԵՆ,
ԹՈՒՐԿԵՐԵՆ,
ԲՇԿԵՐԵՐԵՆ,
ԴԵՐՄԱՆԵՐԵՆ,
ՈՒԶԲԵԿԵՐԵՆ:

Սրբագրիչ՝ Ս. Հախվերդյան

Դրավիտի լիազոր Ա. № 10

Պատվերի տպարան

Պատվեր № 204

Տպրած 2000

Պատի թերթերի խմբագրություններից վոմանք կարծում են, թե
թերթը լույս ընծայելու համար բավական է մի քանի թղթակ-
ցուլթյուն հավաքել, փակցնել մի թերթ թղթի վրա... և արդեն
պատի թերթը պատրաստ է: Մինչդեռ իրականում նյութ հավա-
քելն ու պատի թերթի հերթական համար լույս ընծայելը մեծ
աշխատանք է:

Ինչպես նյութերի վորակը, այնպես էլ պատի թերթի ներ-
գործուլթյունն ու նրա կապի ամրացումը կոլտնտեսականների
հետ՝ կախված է նրանից, թե վորքան ճիշտ կմոտենանք այդ
գործին:

Կրեքենք մի քանի որինակ, վորոնք ցույց են տալիս, թե
ինչպես չպետք է մոտենալ պատի թերթը լույս ընծայելու գոր-
ծին:

Ընկեր Յակիրի անվան կոլտնտեսուլթյան «Ձա բուլլեխտակիդ
կուլխոզ» (Վիննիցայի մարզ) պատի թերթն իր յերկրորդ հա-
մարից հետո դադարեց լույս տեսնել:

Ինչու՞:

Այդ թերթի խմբագրի կոլտնտեսականներին ու գյուղթղ-
թակիցներին չէր ներգրավում թերթը լույս ընծայելու աշխա-
տանքներին: Գյուղթղթակիցների ցանկուլթյունը՝ ողնել թերթը
լույս ընծայելու գործին, խմբագրի կողմից չի ոգտագործվում:
Այսպիսի խմբագրիներ հաճախ հայտարարում են թե, «յես ինքս
ամեն ինչ կանեմ»:

Կամ, ահա, այսպիսի մի որինակ: Հաճախ մեր կոլտնտեսու-
լթյուններում վորոշ ժամանակ պատի թերթեր են լույս տեսնում:
Թյուններում վորոշ ժամանակ այդ թերթերը դադարում են լույս տեսնել: Յեվ



այդ դարմանալի չե. դրանք ամբողջապես պատրաստում են մի-
այն խմբագիրը և խմբկուլի յերկու-յերեք անդամը: Կոլտնտեսային
մասսան թերթին չի մասնակցում:

Այդ թերթերում տեղավորվում են գլխավորապես ընդհա-
նուր բնույթի հոդվածներ, վորոնք վոչ վոքի կոնկրետ կերպով
չեն դիպչում: Այդ թերթերի մասին շատ սրամիտ կերպով կոլ-
տնտեսականներն ասում են. «Միայն չանգոտում ե, բայց վոչինչ
արմատից չի բռնում»:

Ի՞նչ են ցույց տալիս այս որինակները:

Դրանք ցույց են տալիս, վոր այդ թերթերի լույս ընծայման
աշխատանքը ճիշտ չի կատարվում: Չի կարելի թերթը լույս ըն-
ծայելու գործը միմիայն խմբագրի գործ դարձնել:

ԻՍԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

Պատի թերթը կոլտնտեսական մասսաների ինքնագործունե-
յության, կոլեկտիվ ստեղծագործական աշխատանք ե: Թերթը
պետք է պատրաստվի կոլեկտիվ ուժերով: Դրա համար ամենից
առաջ կազմակերպվում ե խմբագրական կոլեգիա:

Ի՞նչպես կարելի յե ճիշտ մոտենալ խմբագրական կոլեգիա
կազմակերպելու խնդրին:

Չի կարելի խմբագրական կոլեգիան նշանակել կուսակազմա-
կերպչի կամ խմբագրի անհատական վորոշումով: Խմբագրական
կոլեգիան ընտրվում ե կոլտնտեսականների ժողովում:

Խմբագրական կոլեգիայի ընտրությանը, կուսակցական կազ-
մակերպության ղեկավարությամբ, ձեռնամուխ են լինում ակ-
տիվ գյուղթղթակից-ստախանովականները—պատի թերթը լույս
ընծայելու նախաձեռնողները: Նրանք զրույցներ են ունենում
պատի թերթերի նշանակության մասին, առաջարկություններ են
համարում, թե կոլտնտեսականներն ինչպես կուղեյին վոր լինի
իրենց պատի թերթը: Կուսակցական կազմակերպությունը նա-
խապես քննում ե ապագա խմբագրական կոլեգիայի կազմի
հարցը:

Ու՞մ պետք ե ընտրել պատի թերթի խմբագրական կոլեգիայի
մեջ:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի պարզ պիտի լինի, վոր
խմբագրական կոլեգիայի մեջ պետք ե ընտրել ամենից առաջ

սոցիալիստական հողագործության ստախանովականներին, ակ-
տիվ ու քաղաքականապես կայուն գյուղթղթակիցներին և առա-
ջավոր կոլտնտեսականներին, նրանց, ովքեր լավորակ ու աշխա-
տանքի բարձր արտագործականության որինակներ են տալիս և
դրա հետ միասին կենդանի հետաքրքրություն են ցուցաբերում
դեպի պատի թերթը:

Խմբագրական կոլեգիայի մեջ չեն կարող ընտրվել այն մար-
դիկ, վորոնք վորեւե բանով արատալորել են իրենց, հասարա-
կական կարծիքի առաջ: Այստեղ պետք ե զգուշություն հայտա-
բերել, վորպեսզի խորթ մարդիկ չնկեն խմբագրական կոլե-
գիայի մեջ: Իրոք աշխատունակ և հեղինակավոր կլինի Բիայն
այն խմբագրական կոլեգիան, վոր կազմված կլինի արտագործ-
ության առաջավորներից և հասարակական ակտիվ աշխատող-
ներից:

Ինչ վերաբերում ե պատի թերթի խմբագրին, հասկանալի
յե, վոր նա պետք ե նշանակվի կուսակազմակերպության կողմից՝
լավագույն գյուղթղթակից կոմունիստների, կոմյերիտականների,
համակրողների, լավագույն վոչ կուսակցական բուլլետների մի-
ջից: Կուսակցական կազմակերպությունը և կոլտնտեսության
վարչությունը պետք ե մեծ ուշադրություն նվիրեն այդ կարևոր
աշխատանքի համար նախապես թեկնածու ընտրելու խնդրին:
Խմբագիրն անմիջական քաղաքական պատասխանատվություն ե
կրում ինչպես խմբկուլի աշխատանքի, այնպես ել ամբողջ պատի
թերթի համար: Խմբագիրը պետք ե աչքի ընկնի իր նախաձեռ-
նությամբ, մասսաներին մոտենալու կարողությամբ, պետքական
մարդկանց պատի թերթի աշխատանքների մեջ քաշելու շնորհ-
քով:

Ճիշտ են վարվում այն կուսակցական կազմակերպություն-
ները, վորոնք ցանկանալով բարձրացնել կոլտնտեսական պատի
թերթի խմբագրի դերը՝ նրա թեկնածվությունը հաստատում են
իրենց նիստում և թույլ չեն տալիս, վոր առանց կուսակազմակեր-
պության համաձայնության խմբագիրը հանվի աշխատանքից:

Պատի թերթի խմբագիրն իր աշխատանքի առաջին իսկ
քայլերից ուժեղ կապ ե ստեղծում կուսակցական կազմակերպու-
թյան հետ:

Ընտրված խմբկուլի ամենաառաջին խնդիրն ե՝ կազմակերպել
գյուղթղթակիցներին և ապահովել պատի թերթի ժամանակին

ուս բովանդակալից լույս ընծայումը: Խմբագրական կոլեգիայի ամբողջ աշխատանքը պետք է յենթարկված լինի այդ կարևորագույն խնդրին: Հենց սկզբից գործն այնպես պիտի դրվի, վոր վոչ միայն խմբագիրը, այլ և ամբողջ կոլեկտիվը, խմբկոլի բոլոր անդամները մտածեն, թե ինչպես պատի թերթի ակտիվ ստեղծեն, ինչպես ապահովեն նյութերի անընդհատ ստացումը, ինչպես անեն, վոր ամբողջ տարվա ընթացքում թերթը կանոնավոր լույս տեսնի:

Խմբագրական կոլեգիայի անդամների միջև պարտականություններ թաշխումն այնպես պիտի անել, վոր նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու լինի նյութերի ստացման այն խնդիրների մասին, վորոնց տվյալ ընկերն ալելի շատ է ծանոթ: Խնդիրների մասին, վորոնց տվյալ ընկերն ալելի շատ է ծանոթ: Խմբկոլի անդամներից մեկը, յենթադրենք, նյութեր է հավաքում կուսակցական-մասսայական և դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: Մյուսը կազմակերպում է ինֆորմացիան—հենարարը ու ոգտակար տեղեկություններ է հավաքում կոլլար-չության, կոլտնտեսության ակումբի, խրճիթ—լաբորատորիայի և այլ աշխատանքների մասին: Ըստ վորում խմբկոլի յուրաքանչյուր անդամն իր հերթին թղթակիցներ է համախմբում իր շուրջը, վորոնց հետ միասին կատարում է խմբագրի և խմբկոլի այս կամ այն հանձնարարությունը:

Աշխատանքի կազմակերպման և խմբկոլի անդամների պարտականությունների ճշտման լավագույն միջոցը հանդիսանում է պատի թերթի պլանը:

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՇԵՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԻ ՊԼԱՆԸ

Մենքից առաջ պետք է կազմել մի քանի հերթական համարների պլանը: Այդ պլանը կապահովի կարևորագույն դեպքերի կապակցված, հետևողական լուսաբանումը, արտագրական պլանների կատարման համար հետևողական պայքարի ծախյալումը: Միաժամանակ պլանը խմբկոլին կոզնի, վոր նա չուշանա այս կամ այն հարցը դնելուց կամ բաց չթողնի կարևորագույն կամ պանիաները:

Կան պատի թերթի խմբագիրներ, վորոնք կարծում են, թե համարի պլանը կարելի է մշակել թերթը լույս ընծայելու օրը, թերթը լույս ընծայելու օրը յեկալ, հավաքեցիր խմբկոլի

անդամներին, տեղն ու տեղը մտածիր, թե ինչ նյութեր պիտի տեղավորել—և ահա, ամեն ինչ պատրաստ է—մտածում են նրանք: Խմբագիրն ու մի քանի հոգի թեև ընդունվ սկսում են գրել հապճեպ, համարը լցնում են իրենց հոգվածներով: Գալիս է մյուս համարը լույս ընծայելու ժամանակը և ահա, խմբագիրը նորից մտածում է, թե ինչով լցնի թերթը:

Թերթի համարն այսպես «պլանավորել» չի կարելի: Խմբագրական կոլեգիան, և վոչ թե միայն խմբագիրը, համարը լույս ընծայելուց առաջ նախապես կոլեկտիվ կերպով պետք է քննության առնի, թե զալիք համարում վոր խնդիրներն են լինելու գլխավորը և վորոշի, թե տվյալ համարն ինչի համար պիտի պայքարի, ինչպիսի նյութերի ստացումը պիտի կազմակերպել, ինչ թղթակցություններ ու հոգվածներ պիտի տեղավորել այդ համարում:

Միանգամայն պարզ է, վոր, յեթե խմբագիրը թերթը լույս ընծայելու օրն է համարի պլանը կազմում, նա չի կարող կապ նախատեսել այդ և նախորդ համարի մեջ տալիս նյութերի միջև:

Մինչդեռ պատի թերթի կարևորագույն խնդիրն է՝ տպած նյութերի հարցում դրական արդյունքների հասնել: Դրա համար հարկավոր է անդրադառնալ առաջուց հարուցած հարցերին, հիշեցնել տպագրված թղթակցությունների մասին, արդյունքների հասնել և դրա մասին իր ընթերցողին շարունակ տեղյակ պահել և վոչ թե միայն մեկ համարում, վորպեսզի այս կամ այն աշխատանքը կոլտնտեսությունում լավ կատարվի:

Կոլտնտեսության օրինակելի պատի թերթը պետք է ոգնի բրիգադի ներսում սոցիալիստական մրցությունը կազմակերպելուն: Խմբագրական կոլեգիան մրցության ընթացքը լուսաբանելու հատուկ պլան կարող է կազմել: Պատի թերթի ամեն մի համարում պետք է տեղեկություններ տալ, թե բրիգադի յուրաքանչյուր անդամն ինչպես է կատարել իր առաջադրանքները:

Տպել մի քանի կոլտնտեսականների պարտավորություն: Հինգ օր հետո հրապարակել այդ պարտավորությունների կատարման առաջին արդյունքները: Կարելի է տեղավորել և շատ օրերի թղթակցություններ, օակայն գլխավոր ողակը, վորից պետք է բռնել — վերցրած պարտավորություններն ամիսներ շարունակ պետք է կազմեն նրա ուշադրության կենտրոնը: Պատի

Թերթի աշխատանքի շնորհիվ կոլտնտեսութեան բրի-
գադները կարող են փայլուն կերպով կատարել իրենց առա-
ջադրանքները: Այդպիսի Թերթեր ճիշտ են աշխատում, վորով-
հետև հետևողականութեմ, համարից համար պայքարում են բրի-
գադի աշխատանքի վորակի լավացման համար: Թերթի յուրա-
յշուր համարը սերտորեմ կապված պետք է լինի նախորդ համա-
րի հետ:

Պատի Թերթի պլանում միաժամանակ պետք է նախատեսել
նաև կոլտնտեսականների կյանքի ու աշխատանքի բազմակողմանի
լուսարարումը: Այդ բանը դեռ շատ խմբագրական կոլեկտիվներ
չեն ըմբռնել: Հաճախ բրիգադային պատի Թերթերը լուսարա-
նում են միայն կոլտնտեսութեան արտադրական կյանքի մի վոր-
ևե մասը: Նրանք չեն հասկանում, վոր լուսարարմող բնագա-
վառի և կոլտնտեսութեան ամբողջ կյանքի միջև սերտ կապ
գոյութեան ունի:

Լավ մշակված պլանը խմբագրական կոլեկտիվին հնարա-
վորութեան է տալիս պատի Թերթում բազմակողմանիորեն դնել
կոլտնտեսութեան կյանքին վերաբերող խնդիրները:

Ահա թե ինչու չի կարելի պլանը կազմել հենց Թերթը լույս
ընծայելու որը: Հարկավոր է համարի պլանը նախորդ պատ-
րաստել:

Առանձին համարի պլանը պատի Թերթի ընդհանուր աշխա-
տանքի մի մասն է: Նա բղիտում է պատի Թերթի մի ամսվա պլա-
նից, կամ վորևէ կամպանիայի պլանից:

Այդ խնդիրը ճիշտ են հասկացել մի շարք կոլտնտեսութեան-
ների պատի Թերթերի խմբագիրներ, վորոնք ակտիվ գյուղթըղ-
թակիցների հետ միասին պատի Թերթի պլանը կազմում են մի
ամիս առաջ: Այդ պլանի հիմքում նրանք դնում են կուսմաս-
սայական աշխատանքը և բրիգադի արտադրական պլանը:

Նրանք ամսվա պլանի մեջ նշում են միայն հիմնական թեմա-
ներ, վորոնք պետք է լուսարարի պատի Թերթը: Պլանում գրված
յուրաքանչյուր թեմայի կողքին նշված է, թե խմբագրական կո-
լեկտիվի անդամներից ով է պարտավոր նյութեր հավաքել տվյալ
թեմայի շուրջը:

Այնուհետև նրանք ամսական պլանի հիման վրա կազմում են
յուրաքանչյուր առանձին համարի պլանը, վորի մեջ արդեն նըշ-
վում է համարը լույս ընծայելու ճիշտ ժամկետը և նախատես-

վում են մարդիկ, վորոնք պատասխանատու են նշանակված աշխ-
նյութերը հանձնելու գործում: Այդ պլանում արդեն նշվում են
նաև այն հարցերը, վորոնք նախատեսված չեն և չեյին ել կա-
րող նախատեսված լինել ամսական պլանում:

Յերբ մեկ ամսով և դեռ ավելի ժամանակով համարների պը-
լանը կազմված է, արդյոք հարկավոր է յուրաքանչյուր առան-
ձին համարի պլան կազմել:

Անպայման հարկավոր է:

Յեւ ահա թե ինչու: Կյանքն առաջադրում է նորանոր հար-
ցեր, վորոնք լրացնում են այն հիմնականը, վոր նախատեսված
է ընդհանուր պլանում: Նշանակում է աշխատանքը շարունակ
պետք է վերադասավորել:

Պատի Թերթի առանձին համարի պլանի մեջ պիտի մտցնել
այն բոլոր անհրաժեշտ փոփոխութեաններն ու լրացումները,
վորոնք առաջադրում է կյանքը: Ասենք թե՛ հրապարակվել և
կուսակցութեան նոր վորոշումը: Պլանի մեջ դրա մասին հիշա-
տակված չէ: Նշանակում է պետք է պլանը փոփոխել, տեղավո-
րել կոլտնտեսականների արձագանքներն այդ վորոշմանը, տեղա-
վորել այնպիսի նյութեր, վորոնք կոլտնտեսականներին մոբիլի-
զացիայի յեն յենթարկում կուսակցութեան այդ վորոշման կա-
տարման շուրջը:

Ստացված է կոլտնտեսական գյուղթղթակցի մի կարեւոր և
հետաքրքիր մի նամակը: Բրիգադում, կոլտնտեսութեան վարչու-
թեան նիստում կամ ընդհանուր ժողովում մի նոր, կարեւոր
հարց է ծագել: Կամ առաջ է յեկել մի նոր ստախանովական,
վորն աշխատանքի արտադրողականութեան ունեւորդ է տալիս,
վորն աշխատանքի նոր մեթոդներ է կիրառում: Այս ամենը,
վորպես ընդհանուր լրացում, պետք է տեղավորել հերթական
համարում:

Պատի Թերթի ստանձին համարի պլանն անհրաժեշտ է նաև
այն պատճառով, վոր միայն այդ պլանով հնարավոր է ճշտորեն
նախատեսել հերթական համարի բովանդակութեանը, գլխավոր
խմաստը: Վերցնենք, որինակ, նյութերի դասավորումը՝ վորոշ
կարգով, առանձնապես կարեւոր թղթակցութեանները աչքի ընկ-
նող տեղ դնելու հարցը: Այս գործը պետք է անել մտածված
ձեով, վորոշ պլանով, այնպես, վոր թափթիվածութեան և պա-
տահականութեան չլինի:

Յուրաքանչյուր խմբագիր պատի թերթի համարի պլանը պետք է կազմի այն հարմարեցնելով կոլտնտեսության վարչության, կուսակցական կազմակերպչի, բրիգադի աշխատանքների պլանին:

Պլանը պետք է լինի կոնկրետ, այսինքն՝ նրա մեջ պետք է նշվեն այն թեմաներն ու հարցերը, վորոնց նվիրվում է պատի թերթի համարը: Պլանում պետք է նշված լինի, թե խմբագրական կոլեգիայի այս կամ այն հանձնարարությունը ով և յերբ է կատարելու, ակտիվիստներից ով է ոգնելու նյութերի հավաքելուն:

Պատի թերթի պլանի թեմաները, հարցերը տալիս է կուսակցական կազմակերպության պլանը, կոլտնտեսության պլանը: Ինքը՝ կոլտնտեսության կյանքն էլ շատ թեմաներ է տալիս պատի թերթին: Այդ բոլորից նախ և առաջ պետք է ընտրել այն թեմաները, վորոնց լուսաբանումն այսօր ավելի մեծ նշանակություն ունի կոլտնտեսության աշխատանքի համար:

Խմբագիրը ծանոթանում է կուսակազմակերպչի աշխատանքի պլանին, զրուցում է բրիգադիների հետ և որինակ՝ պարզում, վոր անհրաժեշտ է ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը, քննադատել այն կոլտնտեսականներին, վորոնք սառն են վերաբերվում դեպի ուսումը, չեն ուսումնասիրում իրենց հանձնարարած գյուղատնտեսական մեքենաների տեխնիկան: Խմբագիրն այդ թեմաները մտցնում է իր պլանի մեջ:

Որինակ՝ նա շրջանային թերթում կարդում է կուսակցության չրջկամի վորոշումը՝ կոլտնտեսություններում մարքս-լենինյան ուսուցման բարելավման մասին: Այդ անմիջականորեն վերաբերում է նաև այն բրիգադին, վորտեղ թերթ է լույս ընծայվում: Նշանակում է խմբագիրն իր պլանի մեջ է մտցնում նա յեվ այդ կարելիոր հարցը:

Կամ վերցնենք այսպիսի որինակ. գյուղթղթակիցները և առանձին կոլտնտեսականներ գալիս են խմբագրի մոտ և դանդաղ վում, վոր տեղական կոոպերատիվն ասպանքների լավ ընտրություն չի կատարում, կամ՝ վատ է դրված կոլտնտեսականների աշխատանքի հաշվառումը: Խմբագիրը պատի թերթի հերթական համարի պլանում տեղ է տալիս այդ դանդաղներին:

Կամ, յենթադրենք թե կոլտնտեսությունում յերևան է յեկել մի նոր աստիանովական, վորը հասել է աշխատանքի արտադ-

րողականության բարձրացման, հասել է բարձր բերքատվության: Խմբագիրը վոչ միայն հերթական համարի պլանում պատի նախատեսնի այդ փաստի լուսաբանումը, այլև պլան պիտի մշակի այդ առթիվ թերթի հատուկ համար լույս ընծայելու, վորտեղ բազմակողմանիորեն պետք է արտացոլի այդ աստիանովականի նոր նվաճումները: Հարկավոր է, ասենք թե, հավաքել կոլտնտեսականների արձագանքները՝ նրա արած կոչին, մանրամասնորեն լուսաբանել տվյալ աստիանովականի աշխատանքի մեթոդները, տպել, թե ով է մրցման մեջ մտել նրա հետ:

Կամ, ասենք թե, ջահել կոլտնտեսուհիների մի խումբ իրենց միջև քննության են առնում այն հարցը, թե վորտեղ ավելի լավ է առվորել: Խմբագիրն ուշադիր լսում է նրանց ձայնը, պարզում է յերիտասարդության կարծիքն ուսման մասին և իր պլանի մեջ դրի յե առնում նաև այդ թեման:

Ահա թե պատի թերթի պլանի համար վորտեղից են թեմաներ ու հարցեր վերցվում: Այդ թեմաներն ու հարցերը տալիս է կոլտնտեսության կյանքը, կուսակցական կազմակերպության կյանքը, կոլտնտեսականների կյանքը:

Շնորհք ունենալ՝ դիտելու, ուշադիր լսելու այն, ինչ ասում են կոլտնտեսականները, ատուղելու տեսածն ու լսածը, առաջին հայացքից մանր թվացող փաստերի մեջ վորապու խոչոր քաղական հարցեր — ահա այն արժեքավոր հատկությունները, վոր պետք է զարգացնի իր մեջ յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր:

Միաժամանակ պատի թերթի խմբագիրը պետք է հիշի, վոր թերթի պլանը վոչ թե թղթի վրա կատարած գրանցումներն են, այլ կենդանի մարդիկ — գյուղթղթակիցները, թերթի ակտիվը, նրա ընթերցողները: Նրանց պահանջները, նրանց կյանքը, նրանց կարիքները — ահա թե ինչն է կազմում պատի թերթի պլանը: Պլանը, այդ յերկրում տեղի ունեցող դիսավոր դեպքերին, կենտրոնական թերթերի կարևորագույն հաղորդումներին զգայուն կերպով արձագանքելու կարողությունն է: Որինակ՝ խմբագիրը տեղեկանում է Մարիա Դեմչենկոյի հիանալի նվաճումների մասին: Յեթե նա զգայուն աշխատող է, անմիջապես կսկսի նայել իրենց հարվածայինների ու հարվածայնուհիների շարքերը և կմտածի, ինչպես անել, վոր թերթի ոգնությամբ իրենց կոլտնտեսությունումն էլ Մարիա Դեմչենկոյի նման մարդիկ աճեն:

Պլանի նախագիծը մշակելուց հետո խմբագիրը խմբկուլի նիստե-
ն հրավիրում, վորտեղ կոլեկտիվ կերպով քննվում, լրացվում ու
հաստատվում է համարի պլանը:

Խմբագրական կոլեգիայի նիստի որվա, ժամի ու տեղի մա-
սին խմբագիրը նախորոք պետք է տեղեկացնի խմբկուլի անդամ-
ներին, գյուղթղթակիցներին և մյուս կոլտնտեսականներին:

Համարի լույս ընծայմանը նախընտրված նիստում խմբկուլի յու-
րաքանչյուր անդամ պետք է հանդես բերի իր նախաձեռնություն-
ներ: Վոչ միայն խմբագիրը պիտի նախորոք մտահոգվի այն մա-
սին, թե ինչպես անի, վոր թերթի համարն ավելի պայծառ ու
բովանդակալից լինի, այլև յուրաքանչյուր խմբկուլի անդամ, պա-
տի թերթի յուրաքանչյուր ակտիվիստ պետք է մտածի դրա մա-
սին: Մոտավորապես նկարագրենք, թե ինչպես կարող է տեղի
ունենալ խմբագրական կոլեգիայի գործնական նիստը:

Խմբկուլի անդամները հայտնում են, թե իրենք ինչ նյութեր
ունեն, ինչ են արել խմբագրական կոլեգիայի նախապես մշակած
պլանի կատարման ուղղությամբ:

Խմբկուլի անդամները կարողում են յեղած թղթակցություն-
ները քննարկում այն: Այլա քննարկվում են համարի պլանը և այն
լրացումները, վոր թելադրում է կոլտնտեսության կյանքը:
Խմբկուլի նիստը ղեկավարում է խմբագիրը:

Ինչպես տեսնում ենք, պատի թերթի խմբկուլի նիստը պա-
տասխանատու գործ է: Առանձին նյութերն ու համարի պլանը
քննելիս խմբագիրը պետք է հայտաբերի գաղափարական կայու-
նություն և քաղաքական բավականաչափ գրագիտություն:

Պատի թերթի ամբողջ կոլեկտիվը պետք է ցույց տա, վոր
խկապես գիտի իր կոլտնտեսության, իր բրիգադի կյանքը: Այդ-
նրա համար է անհրաժեշտ, վորպեսզի պատի թերթի յուրաքան-
չյուր համարն իրոք մոբիլիզացիայի յենթարկի կոլտնտեսական-
ներին՝ լուծելու համար այն խնդիրները, վորոնք տվյալ մոմեն-
տին կանգնած են բրիգադայի և կոլտնտեսության առաջ:

Հաճախ համարի լույս ընծայման համար գումարված խմբ-
կուլի նիստում պարզվում է, վոր խմբկուլի անդամները լիովին չեն
կատարել իրենց տրված հանձնարարությունները, իսկ խմբագիրը

ժամանակին չի կարողացել հետևել այդ առաջադրանքների կա-
տարմանը:

Ի՞նչ պիտի անել այդպիսի դեպքերում:

Ի հարկե խստորեն պիտի քննադատել նրանց, ովքեր առաջա-
դրանքը տապալում են, վորպեսզի նրանք այդպիսի սխալները
չկրկնեն: Սակայն, միաժամանակ պետք է վճռական միջոցներ
ձեռք առնել, վորպեսզի համարը լույս ընծայվի այնպես, ինչ-
պես ծրագրված է յեղել: Յենթադրենք, թե պակասում են 1936
թվի դարնանացանի նախապատրաստությանը վերաբերող նյու-
թերը: Խմբկուլի այն անդամը, վորին հանձնարարված է յեղել
այդ թեմայի շուրջը նյութեր հավաքել, բերել է միայն բրիգա-
դի չորս հոգվածը: Այդ բավական չէ: Հարկավոր են նաև հենց
իրենց, կոլտնտեսականների նյութերը:

Խմբագիրն անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում. յերկու-
յերեք գյուղթղթակցի հանձնարարում է հավաքել պակասող նյու-
թերը: Բացի այդ, խմբագիրը խմբագրական կոլեգիայի անդամ-
ներից մեկին հանձնարարում է արագորեն առաջարկություններ
հավաքել կոլտնտեսականներից այն մասին, թե ինչպես ավելի
լավ կլինի ոգտագործել անցյալ տարվա ցանքի նախապատրաս-
տության դրական փորձը, ինչպես կարելի յե բարձր բերքա-
տվության հասնել: Հենց այստեղ էլ, նիստում, խմբագիրը խմբ-
կուլի մյուս անդամների հետ միասին մի հարցացուցակ է մշա-
կում կոլտնտեսությունների հետ զրույց ունենալու համար, վորի
մեջ, որինալ, մտցնում է այսպիսի հարցեր. լավ է պահված ար-
դյոք սերմացուն, բոլոր մեքենաներն են վերանորոգված արդյոք,
եւ ի՞նչ պիտի անել մեքենաներն ու ինվենտարը դարնանացանին
նախապատրաստելու համար, ի՞նչ դրության մեջ է գտնվում
քաղող ուժը, լծասարքը, տվյալ կոլտնտեսականն ի՞նչ է առա-
ջարկում ցանքի նախապատրաստության և բերքատվության բար-
ձրացման ուղղությամբ:

Այս նյութի կազմակերպումը հնարավորություն կտա լիար-
ժեք դարձնելու պատի թերթի հերթական համարը:

Պատի թերթի յուրաքանչյուր համարը պետք է վորոչ նպա-
տակի ձգտի, իր մեջ ունենա այնպիսի նյութեր, վորոնք ոգնեն
բրիգադի աշխատանքներին: Ահա թե ինչու, յերբ պարզվում է,
վոր կարևորագույն նյութերը պակասում են, պետք է հավաքել

պակասող թղթակցությունները, թերթը լրացնել թարմ փաստե-
րով, որինակներով, նկարներով:

Պատի թերթը քաղաքական լուրջ գեղեցիկ է: Դրա համար ել խոմ-
բագիրն ու խմբագրական կոլեգիան պետք է շատ ուշադիր լինեն
դեպի այն նյութերը, վոր տեղավորվում են թերթում: Սոցիալիզ-
մի թշնամիները, կուլակություն մնացորդները տեղ չպիտի ունե-
նան պատի թերթի խմբագրական կոլեգիայում, ինչպես և դյուդ-
թղթակիցների շարքերում: Պատի թերթի խմբագիրը պետք է
ուշի-ուշով հետևի, վոր թշնամիները վոչ մի կերպ չխցկվեն
պատի թերթի մեջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ

Ի՞նչ պիտի անի խմբագրական կոլեգիան, յերբ արդեն հեր-
թական համարի նյութերը հավաքված են:

Ամենից առաջ ամենաաչքի ընկնող տեղը պիտի ապահովել
կոլտնտեսականների նամակների համար:

Ինչպես արդեն ասացինք, թղթակցություններն ու բոլոր
նյութերն ասանում են խմբագիրն ու խմբկոլի անդամները: Յե՛ւ
ահա, ամենից առաջ պետք է ընտրել այն նամակները, վորոնք
խոսում են կոլտնտեսության ամենակարևոր խնդիրների մասին:
Սա լուրջ գործ է: Հիմնականը, վորով պիտի դեկավարվեն խոմ-
բագիրն ու խմբկոլի անդամները, այն է, վոր պատի թերթում
տեղավորելիք յուրաքանչյուր թղթակցությունը համապատասխա-
նի կոմունիստական կուսակցության քաղաքականությունը: Կու-
սակցության քաղաքականությունն աղավաղող թղթակցություն-
ները չեն կարող տեղավորվել թերթում:

Կասկած առաջացնող նամակները պետք է հետաձգել, հանձ-
նել խմբկոլի անդամներին կամ դյուդթղթակիցների խմբակին
փաստերն ստուգելու:

Թղթակցությունների ուշադիր ընթերցումն ու տեղավորումը
խմբագրական կոլեգիայի կարևորագույն պարտականությունն է:
Նա պետք է ուշադիր վերաբերմունք ունենա դեպի յուրաքանչ-
յուր նամակի հեղինակը, մանավանդ դեպի ակնասկները, վորոնք
առաջին անգամ են գրում զրաթի թերթին:

Շատ ոգտակար կլինի խմբագրական կոլեգիայի նիստին հրա-

վերել հենց իրենց՝ թղթակցությունների հեղինակներին, վորպես-
դի կարելի լինի տեղն ու տեղը, հենց իրենց՝ որինակներով ցույց
տալ, թե այս կամ այն թղթակցությունն ինչ ուղղությամբ կարիք
է գրում, կամ ինչու չի կարելի տեղավորել թերթում, ինչի մա-
սին և ինչպես պետք է գրել թերթի հետևյալ համարին:

Գործնականում ինչպե՞ս պիտի մոտենալ թղթակցություն-
ները թերթում տեղավորելու նախապատրաստմանը:

խմբագիրը թղթակցությունները գրական մշակումը հանձնա-
րարում է խմբկոլի միայն այն անդամներին, վորոնք գրական ու
քաղաքական բավականաչափ գրագիտություն ունեն, վորոնք
թղթակցություններն ուղղելու վորձ ունեն: խմբագրական կոլե-
գիայի մյուս անդամները պետք է սովորեն ավելի վորձված-
ներից:

Հերթական համարի թղթակցություններն ընտրելուց հետո
խմբագրական կոլեգիան այդ թղթակցություններն այնպես պիտի
ուղղի, վոր այնտեղ մնա այն գլխավորը, ինչ վոր ցանկացել է
ասել հեղինակը: Դրա հետ միասին թղթակցությունը պիտի լինի
կարճ, ցայտուն, կոլտնտեսական ընթերցողին մատչելի ու հա-
կանալի: խմբագիրը պետք է ստուգի, թե խմբկոլի անդամները
վորքան լավ են ուղղել թղթակցությունները: Նա անձամբ խմբ-
կոլի անդամներին պիտի ոգնի՝ լավագույն ձևով թղթակցությու-
նը մշակելու գործում:

Թղթակցություններն ուղղելու և գրական մշակման գործին
կարելի չէ մասնակից անել ուսուցիչներին: Հաճախ նույնիսկ խոմ-
բագրական կոլեգիայի լավագույն անդամները չեն կարողանում
բավարար չափով կապակցված, գրական լեզվով արտահայտել ի-
րենց մտքերը: Ուսուցիչը կարող է մեծ ոժանդակություն ցույց
տալ խմբագրական կոլեգիային: Պետք է մասնակից անել նաև
ագրոնոմին, վորը կարող է ոգնել ագրոտեխնիկային վերաբերող
թղթակցությունների ճիշտ մշակմանը:

Դպրոցի ուսուցիչը պետք է լինի խմբագրի բարեկամն ու տե-
տիվ ոգնականը: Այնպիսի պայմաններ պիտի աստեղծել, վոր ու-
սուցիչն իրեն զգա վորպես խմբագրական կոլեգիային անհրաժեշտ
մի մարդ, վոր նա խմբագրական կոլեգիային և դյուդթղթակից-
ներին ոգնի սովորել մայրենի լեզուն:

Բայց ահա, թղթակցություններն ու նամակներն արդեն նա-
խապատրաստված են թերթի հերթական համարում տեղավորե-

լու համար: Այժմ մնում է համարը ձևավորել, թղթակցությունները դասավորել թերթում, նկարազարդել այն և այլն:

Ոմբագիրը այս պարտականությունները կսկսի լրագրողների հետ խմբակի անդամներին ու թերթի հետ կապված մյուս ակտիվիստներին:

Մասնավորապես հատուկ ուշադրություն պետի դարձնել թերթերի նկարազարդման վրա: Նկարները թերթն ավելի հետաքրքիր, ավելի ցայտուն են դարձնում: Ոմբագիրը պետք է հոգ տանի նկարների մասին: Նա պետք է տեղեկանա, թե գյուղթղթակիցներից, աշակերտներից ով է լավ ծաղրանկար նկարում և նրանց մասնակից անի թերթի աշխատանքներին, ծաղրանկարի կոնկրետ թեմաներ տա նրանց:

Ավելի լավ է նկարիչին տալ այս կամ այն թղթակցությունը, կամ նրա պատճենը, վորպեսզի նրա մեջ նշված փաստերի հիման վրա յեւ պատրաստվի ծաղրանկարը: Այսպիսով նկարը թերթի բովանդակության հետ սերտորեն շաղկապված կլինի:

Յեթե թերթում վոտանավորներ, կամ բանաստեղծություններ չկան, խմբագիրը պետք է խմբակի անդամների ուշադրությունը հրավիրի այդ հանգամանքի վրա և գրականությունը հետաքրքրվող ընկերներին հանձնարարի կազմակերպել այդ գործը: Լավ խմբագիրն այդ գործը կազմակերպում է վոչ միայն թերթը լույս ընծայելու օրերը, այլ ծրագրված կարգով պատի թերթի շուրջն է համախմբում գրական ստեղծագործական շնորհ ունեցող կոլտնտեսականներին: Այսպես որինակ՝ Վաղարշապատի չրջանի մի քանի գյուղերի կոլտնտեսային պատի թերթերը վոտանավորներ, յերկեր ու նոր հեքիաթներ են հավաքում: Այդ թերթերից շատերի մեջ զգալի տեղ են գրավում կոլտնտեսականների գրական ստեղծագործությունները:

Ոմբագիրը պետք է հոգ տանի պատի թերթի արտաքին ձևավորման մասին: Ոմբագրական կոլեգիայի անդամներից մեկին կամ թերթի ակտիվիստին հանձնարարում է թղթակցությունների վերնագրերը գրել, մյուսին հանձնարարում է թղթակցությունները դասավորել թերթում, յերրորդին հանձնարարում է գունավոր մատիտներ, ներկեր ընտրել, գունավոր թղթի նեղ չերտեր կտրել և դրանցով թղթակցությունները բաժանել իրարից:

Այսպիսի համերաշխ ու կոլեկտիվ աշխատանքով է ստեղծվում պատի թերթի համարը:

Պատի թերթի հերթական համարի լույս ընծայման առթիվ դոմարված խմբագրական կոլեգիայի նիստում կարող են ընելու թյան առնել նաև հետևյալ մի քանի համարների պլանը: Այդ դեպքում խմբագրական կոլեգիան և առանձին ակտիվիստները ժամանակ կունենան հարցերն ուսումնասիրելու, թղթակցություններ գրելու, մարդկանց հետ զրուցելու, մտքերի փոխանակություն ունենալու բրիգադիւրի, կուսկազմակերպչի և այն բոլոր ընկերների հետ, վորոնց ցանկալի յե մասնակից անել պատի թերթի հետևյալ համարներին:

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԵԼՈՒՑ ՇԵՏՈ

Պատի թերթի հերթական համարը լույս տեսավ:

Ոմբագրական կոլեգիան ի՞նչ պետք է անի թերթի համարը լույս ընծայելուց հետո:

Ամենից առաջ թերթի բովանդակությունը պետի հասցնել յուրաքանչյուր կոլտնտեսականին ու կոլտնտեսուհուն:

Ի՞նչպես անել այդ:

Ահա թե ինչպես նն անում այդ լսով խմբագիրները:

Նրանք կոլտնտեսությունում պատրաստում են շարժական տախտակներ՝ բրիգադային պատի թերթերի համար: Այդ տախտակները բրիգադի մի հոգամասից տեղափոխվում են մյուսը: Ճաշի ընդմիջումին տախտակների վրա փակցված թերթը տարվում է այնտեղ, ուր կոլտնտեսականներն են հավաքվում: Հենց այդտեղ էլ ամեն օր պատի թերթի բարձրագույն ընթերցանություն է կազմակերպվում:

Այնտեղ, վորտեղ բրիգադներում ու ողակներում կազմակերպում են պատի թերթի բարձրագույն ընթերցանություն, հաճախ այդ ընթերցումները վեր են ածվում կոլտնտեսականների արտագրական խորհրդակցության:

Պատի թերթի բարձրագույն ընթերցանության ժամանակ ընելության են առնվում հետաքրքիր թղթակցություններ, մորիլիգացիայի յե յենթարկվում կոլտնտեսականների ակտիվությունը թերթում նշած թերությունների վերացման համար պայքարելու

խնդրի շուրջը: Հենց այստեղ ել ընթերցողը հավաքում է կո-
տեսակապանների արձագանքը պատի թերթում տեղավորած նյու-
թերին և նրանց դիտողությունները հաղորդում խմբագրական
կոլեգիային:

Սակայն, խնդիրը միայն ընթերցումը չէ: Սովորաբար յերբ
թերթի համարը կախվում է, անմիջապես նրա առաջ բազմու-
թյուն է հավաքվում. մարդիկ կարդում են: Վոմանք չատ են
հետաքրքրվում, վոմանք՝ քիչ, վոմանք դժգոհ են, վոմանք՝
գոհ, լսվում են խրախուսական ու դժգոհություն բացականչու-
թյուններ, դիտողություններ և այլն: Պատի թերթի մոտ հա-
ճախ լուծվում են այս կամ այն թղթակցությունից բխող հար-
ցերը: Հենց այդտեղ ել կարելի չէ լսել, թե կոլտնտեսականներն
ինչ կարծիքի յեն պատի թերթի բովանդակության մասին, նրանց
կարծիքով ինչ է պահասում թերթում, ում պետք է քննադա-
տեր թերթը, ում կոմպարանի: Կարելի չէ լսել նաև այսպիսի
դիտողություններ, թե՛ ահա, պատի թերթն այսինչ փաստերի
մասին գրում է, իսկ մյուսների մասին (որինակ այսինչ փա-
տերի մասին) չի գրում:

Լույս ընծայած պատի թերթի մասին արված այս դիտողու-
թյունները, չատ կարևոր են խմբագրի համար, և վոչ միայն
խմբագրի, այլև խմբակի բոլոր անդամների ու գյուղթղթակից-
ների համար: Այդ դիտողությունները պակաս կարևոր ու հետա-
քրքիր չեն, քան հատկապես հրավիրված ընթերցողների ժողով-
ները: Այդ տեսակետից պատի թերթի խմբագիրն «ամենայնըն-
դուն» է բոլոր խմբագիրներից, նա անմիջականորեն տեսնում ու
լսում է ընթերցողներին՝ հենց թերթի լույս տեսնելու ու կար-
գացվելու ժամանակ: Այդ առավելությունը պետք է լայնորեն
ոգտագործվի խմբագրի աշխատանքների ընթացքում, խմբագրա-
կան կոլեգիայի և յուրաքանչյուր գյուղթղթակցի աշխատանք-
ներում:

Հասկանալի չէ, վոր նրանք տեղում պետք է լինեն, յերբ
մարդիկ հավաքված կարդում են թերթը, պետք է թերթի մոտ
լինեն և ինչպես ասում են՝ «ականջին ող անեն» այն ամենը, ինչ
կլսեն այնտեղ: Նրանք բաց չպիտի թողնեն իրենց լսած վոչ մի
գործնական դիտողությունը: Այդ խիստ կարևոր է պատի թեր-

թի հետևյալ համարի համար, քանի վոր թերթի հետևյալ հա-
մարները լույս ընծայելիս կարելի չէ ոգտագործել ընթերցողնե-
րի արած խելացի դիտողությունները:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերը մենք ասացինք, վոր համարը լույս տեսնելուց հետո
խմբագրական կոլեգիան թերթի ընթերցում է կազմակերպում,
աշխատում է թերթի բովանդակությունը հասցնել ընթերցողնե-
րին, աշխատում է տեղավորված նյութերի պատասխանը ստա-
նալ: Այս առթոյժ աշխատանքի նպատակն է՝ դրական արդյունք-
ների հասնել, բարելավել կոլտնտեսության աշխատանքը: Սա-
կայն չի կարելի հույս դնել միայն ընթերցողների վրա, չի կարե-
լի միայն առաջարկություններ հավաքելով սահմանափակվել,
բավարարվել միայն խմբագրական կոլեգիայի պատի թերթի հա-
մարի քննադատությամբ: Պատի թերթի գործծնություն համար
պետք է պայքարել նաև ուրիշ միջոցներով:

Յենթադրենք թե պատի թերթը հարց է դրել բրիգադի աշ-
խատանքները այնպես կազմակերպել, վոր բրիգադն ստախանովա-
կան դառնա: Սա կարևոր հարց է, վոր անալոյման հետաքրք-
րում է բոլոր կոլտնտեսականներին: Այստեղ արդեն չի կարելի
բավարարվել առանձին կոլտնտեսականների մեկ-յերկու պատա-
խաններով: Հարկավոր է, վոր այդ թղթակցությունը քննարկի
ամբողջ բրիգադը և իր կարծիքը ներկայացնի կոլտնտեսության
վարչության քննությանն ու հաստատմանը:

Կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում առանձին կո-
տնտեսականների ու թղթակցությունների առաջարկության քն-
նարկումը թերթը գործոն դարձնելու համար մղվող պայքարի
ամենաուժեղ միջոցներից մեկն է: Ահա որինակ ինչպես է ար-
վում այդ Ստեփան Ռադինի անվան կոլտնտեսությունում (Կույ-
բիշևի յերկրամաս, Բորսկի շրջան):

«Գյուղթղթակից Նիկոլանը Յուրկինի ողակի հետ մրցելիս
նկատեց, վոր այդ ողակը թեև կատարում է իր նորման,
սակայն նրա աշխատանքը ցածր վորակի չէ: Նիկոլանն այդ
մասին գրեց առաջին քաղաքի թերթին: Ճաշի ընդմիջումին



Թղթակցութիւնը կարգացին քրիզադէի ժողովում: Վորոշեցին՝ Յուրկինին առաջարկել՝ վերակառուցել իր աշխատանքը: Այդ դաստիարակչական մեծ նշանակութիւն ունեցաւ»։ Ինչպես տեսնում ենք, ժողովում Թղթակցութիւնները քնննարկելը շատ արժեքավոր արդիւնք է տալիս։

Սակայն, Թերթի գործողութեան համար մղվող պայքարում սա միակ միջոցը չէ։ Այդպիսի պայքարի մի ուրիշ արժեքավոր փորձ ունի Խարկովի մարզի Լազովսկի շրջանը։ Այդ փորձը նկարագրում եւ «Ռաբոչե-Կրեստյանսկի կորեսպոնդենտ» ժուռնալը իր համարներէից մեկում։

Յարեդարեակի գյուղխորհրդի նախագահ ընկեր Կովալյովն իր ամենօրյա աշխատանքներէ ընթացքում լաշնորեն ոգտադործում է մամուլի ցուցումները։ Թերթերն ուշադիր կարդալով՝ ընկեր Կովալյովը կտրում է նրանցից այդ թըղթակցութիւնները, վորոնք վերաբերում են կոլտնտեսութեան դրական փորձերին, կամ ընդհակառակն, նրանց աշխատանքի թերութիւններին։ Կտրած թղթակցութիւններին նա ավելացնում է իր դիտողութիւնները, թե հատկապես ինչի վրա պետք է ուշադրութիւն դարձնել։ Այդ թղթակցութիւնն ու իր դիտողութիւնը նա ուղարկում է կոլտնտեսութիւն, վորը կարող է այդ փորձից որինակ վերցնել և ոգուտ քաղել։

«Չերվոննի ուրաչ» կոլտնտեսութիւնում վատ եր դրված վարի վորակի հսկողութիւնը։ Ընկեր Կովալյովը թերթերից մեկում այդ հարցին վերաբերող մի հոդված գտաւ և իսկույն ուղարկեց հետեյալ մակագրութեամբ. «Այստեղ թեև ձեր կոլտնտեսութեան մասին չեն գրում, սակայն ձեզ մօտ ել գործն ավելի լավ չի դրված։ Հարկավոր է այդ թերութիւնները վերացնել այնպես, ինչպես այս հոդվածում է ցույց տրվում։ Կգամ և կատուգեմ»։

Յերբ Կովալյովն խմացաւ, վոր «Վպերյոդ» կոլտնտեսութիւնում խրճիթ-լարորատորիան վատ է աշխատում, նա թերթում համապատասխան հոդված գտաւ խրճիթ-լարորատորիաների աշխատանքի մասին, նրան կցեց թերթից կտրած մարդկոմի վորոշումը ագրո-խրճիթների աշխատանքի

մասին, ինքն ել մի յերկտող գրեց և այդ բոլորն ուղարկեց «Վպերյոդ» կոլտնտեսութեան վարչութեան նախագահին։

Իր յերկտողով գյուղխորհրդի նախագահը կոլտնտեսութեան նախագահից պահանջում եր, վոր նա անձամբ հետեի ագրո-խրճիթի աշխատանքներին և անմիջապես ուղղի նրա աշխատանքում յեղած թերութիւնները»։

Թերթում յեղած նյութերին այսպիսի վերաբերմունք ցույց տալու որինակը պետք է բոլոր գյուղխորհրդի, վոլվարչութիւնների նախագահների և քրիզադէիւնների սեփականութիւն դարձրնել։

Թերթի քննադատութեան նկատմամբ ճիշտ վերաբերմունք ունենալը բարձրացնում է կոլտնտեսութեան, գյուղխորհրդի և պատի թերթի ղեկավարի հեղինակութիւնը։

Պատի թերթը քննադատեց կոլվարչութեան նախագահին։ Նախագահը հասարակութեան առաջ ընդունեց իր սխալները և պատմեց, թե ինչպես պիտի ուղղի իր այդ սխալները։ Հասարակութեան առաջ այդ նախագահի հեղինակութիւնը խիստ բարձրացաւ։ Բարձրացաւ նաև թերթի հեղինակութիւնը։ Կոլտնտեսականները տեսան, վոր նախագահը գնահատում է մասսաների քննադատութիւնը, կարողանում է ուղղել իր սխալները։

Պատահում է, վոր պատի թերթում տեղավորված նյութերը վոչ մի աղբեցութիւն չեն ունենում վորեւէ կոլտնտեսականի կամ կոլտնտեսութեան ղեկավար աշխատողների վրա։

Այդպիսի դեպքում, ի՞նչ է անում խմբագրական կոլեգիան։ Նա աջակցութիւն ստանալու համար պետք է դիմի շրջանային, հանրապետական, յերկրային թերթին, ՀամԿ(բ)Կ շրջանային կոմիտեյին, կոլտնտեսութեան հասարակայնութեանը։

Պատի Թերթը պիտի համառորեն հետապնդի, վոր իր հարուցած հարցը միևնչև վերջ հասնի։ Յեթե մեկ թղթակցութիւնը չաղբեց, պետք է կրկին անդրադառնալ հարուցած հարցին, նոր փաստեր ընտրել և հրապարակել։

Քննադատութիւնը դիմադրութեան է հանդիպում դասական կարգային թշնամիների, բյուրոկրատների, լոգերի և կոլտնտեսային շինարարութեան բոլոր թշնամիներէ կողմից։ Յերբ թերթի ճիշտ քննադատութիւնը թշնամական վերաբերմունքի

յի հանդիպում, նա պետք է առանց վհատվելու մերկացնի ինքնա-
քննադատութեան թշնամիներին:

Խմբադրական կոլեգիան պետք է այնպես անի, վոր ներ-
գործութիւնն ունենան վոչ միայն այս կամ այն թերութիւնը
քննադատող թղթակցութիւնները, այլ և այնպես պիտի անել,
վոր ներգործեն և՛ մերկացնող և նվաճումները պատկերող
նյութերը: Պակաս կարևոր չե՛ դրական փորձը նկարագրող թղթ-
թակցութիւնների ներգործութեան համար մղվող պայքարը:

Որինակ, յեթե պատի թերթը նկարագրել է հարվածային
կոլտնտեսականի, ստախանովականի վորևէ աչքի ընկնող փոր-
ձը, ապա նա այնպես պիտի անի, վոր այդ փորձն ոգտագործեն
նաև ուրիշները: Դրա համար պետք է այդ ստախանովականի
յեղույթին պատասխաններ կազմակերպել, տպագրել այնպիսի
նյութեր, վորոնք ցույց տան, թե պատի թերթի նկարագրած
դրական փորձն ինչպես է կիրառվում աշխատանքի մյուս բնա-
դավառներում:

Իսկ գլխավորն այն է, վոր յեթե պատի թերթը վորևէ գոր-
ծի ձեռնամուխ է յեղել, պետք է շարունակի այն և մինչև վերջը
հասցնի:

Պատի թերթի հաջողութիւնը, նրա գործունեութիւնը մեծ
չափով կախված է նրա բովանդակութիւնից, նրանից, թե ինչ-
պես են դրում գյուղթղթակիցները:

Գործուն լինել չի կարող այն պատի թերթը, վորն որի-
նակ թերութիւնների մասին խոսելիս կոնկրետ կերպով չի նը-
շում մեղավորներին, հայտնելով թերութիւնների մասին՝ առա-
ջարկութիւններ չի անում այդ թերութիւնների վերացման հա-
մար:

Այլ բան է, յերբ պատի թերթը քննադատում է չարիքի
կոնկրետ մեղավորներին, տալիս է նրանց անունները, կոնկրետ
փաստեր և որինակներ է բերում:

Դժվար է պատի թերթի կոնկրետ քննադատութեանը չա-
տասխանելը:

Այստեղից յեզրակացութիւն—պատի թերթը ներգործոն
լինել կարող է միայն այն ժամանակ, յերբ նա փաստեր է բե-
րում: Պատի թերթի նյութերն անպայմանորեն հասարակական
հետաքրքրութիւն առաջացնող պիտի լինեն:

Կոլտնտեսութիւններում շատ կարելի չե՛ գտնել այնպիսի պա-

տի թերթեր, վորոնք լույս են տեսնում ղեպքից ղեպք, ամսական
մեկ անգամ, յերբեմն ել յերեք ամիսը մեկ: Այդպիսի թեր-
թեր պատին կախված են մնում մինչև գոնաթափվելը, մին-
չև, վոր ծածկվում են փոշով: Պարզ է, վոր այդպիսի թերթերը
հետ են մնում կյանքից: Նրանք լուսաբանում են միայն այն, ինչ
վաղուց արդեն քննվել, անցել է: Մինչդեռ հետ մնացող թերթը
թերթ չի: Թերթը պետք է կարողանա հասնել կյանքի հետևից,
կանխել սխալները, ժամանակին մոբիլիզացիայի յենթարկել կոլ-
տնտեսականներին՝ թերութիւնները շտկելու համար:

Հետևապես՝ ներգործոն կարող է լինել այն թերթը, վորը
լույս է տեսնում հաճախակի, վորոշակի ոբեր, որինակ՝ յե-
րեք ուր մեկ, կամ հնդորյակում մեկ անգամ: Պատի թերթի
խմբագիրը միշտ պետք է հիշի իր գլխավոր կոչումը—պայքարել
կուսակցութեան ու կառավարութեան վորոշումների կատարման
համար, պայքարել կոլտնտեսականների լավագույն մոբիլիզացիա
յի համար՝ կատարելու կոլտնտեսութեան կանոնադրութիւնը,
լայնորեն մասսայականացնել ստախանովականների փորձը, կան-
խել թերութիւնները, իր ժամանակին ահազանգել դասակար-
գային թշնամու վտանգութիւնների մասին, աշխատանքում
յեղած առանձին սխալները ու աղավաղումների մասին: Ահա
թե ինչու այնքան անհրաժեշտ է թերթը լույս ընծայել իր ժամա-
նակին, կանոնավորապես, խմբագրական կոլեգիայի սահմանած
ժամկետներին: Փորձը ցույց է տվել, վոր անհրաժեշտութեան
ղեպքում բրիգադներում կարելի չե՛ նույնիսկ ամեն ոք պատի
թերթ լույս ընծայել:

Պատի թերթը հաճախակի լույս ընծայելու ոգուտը հակա-
յական է: Հենց այն փաստը, վոր թերթը լույս է տեսնում յու-
րաքանչյուր 2 կամ 3 ուր մեկ անգամ, այդ փաստն արդեն ու-
թեղացնում է կոլտնտեսային հասարակայնութեան ուշադրու-
թիւնը ղեպի թերթը: Սահնորյա թերթն ավելի մեծ հաջողու-
թյամբ կարող է ոգնել սոցմըմանը, քան թե, որինակ, տասնորյա
թերթը: Սահնորյա թերթն ավելի հաճախակի կտպի առաջադը-
րանքների կատարման արդյունքները, ավելի արագորեն կարող
է առաջ քաշել հետ մնացողներին, ստախանովյան աշխատանքի
և առաջ քաշել հետ մնացողներին, ստախանովյան աշխատանքի
որինակներն ավելի արագ կտեղափոխի կոլտնտեսութեան աշխա-
տանքի մյուս բոլոր բնագավառները:

ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԿԱԾ ՀԱՄԱՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատի թերթի համարը լույս ընծայելուց հետո խմբիկը պետք է քննադատորեն դիտարկի այն, քննության առնի, թե ինչն է բաց թողնված, լուսաբանված հարցերից մյուսն է առանձնապես լավ, ինչ սխալներ ու անփութություններ կան լույս ընծայված համարում:

Դրա համար ել ոգտակար է թերթը լույս ընծայելուց և ընթերցանություն ժամանակ կարծիքներ հայտնելուց հետո խմբագրական կոլեգիայի և գյուղթղթակիցների նիստ հրավիրել:

Լույս ընծայված համարի քննարկման համար հրավիրված ժողովը չպետք է լինի փակ, միայն խմբիկի անդամների մասնակցությամբ: Այդ ժողովին պետք է հրավիրել նաև թղթակցությունների հեղինակներին, թերթի ակտիվն ու ընթերցողներին:

Քննադատությունը պետք է վերաբերի նաև գյուղթղթակիցների գործունեությանը: Պետք է քննադատել այն գյուղթղթակիցներին, մյուսն է սխալ փաստեր են հաղորդել, իրենց թղթակցությունում հարցը մակերեսորեն են դրել, սահմանափակվել են միայն խմբագրական կոլեգիային թղթակցություն տալով, իսկ իրենց մոտ—ողակում, բրիգադում մյուսինչ չեն արել թերությունների վերացման ուղղությամբ:

Պատի թերթի բովանդակության վերլուծությունն ու քննադատությունը պատրաստվող և խոշոր նշանակություն ունի: Այդ յուրահատուկ մի դպրոց է, մյուսեղ և, խմբագրական կոլեգիայի անդամները և, գյուղթղթակիցները իրենց ծանոթ նյութերի վրա սովորում են ուղղել սխալները, սովորում են ավելի լավ գրել:

Ահա թե գյուղթղթակից Կիստանովն ինչպես եր քննադատում «Կոլտոլնի կլիչ» թերթի համարներից մեկը (Կոլտոլնի յեբկրամաս):

«Նվաճումը—մրցահրավեր» կոնկրետ թղթակցությունն է: Թերությունները—առաջնորդողում հակասություններ կան: Սկզբում ասված է, թե յեբկրոդ բրիգադը լավն է, իսկ վերջում նույն բրիգադի մասին վատն է ասված: Մի քանի տեղ անմոռոշություններ կան: Առաջնորդող հոգվածը կոլտնտեսականներին գովաբանում է նրա համար, մոր կատարել

են ցանքի արտադրական նորման—0,73 հեկտար: Սակայն մեզ մոտ նորման զգալի չափով ավելի բարձր է: Ինչու պատի գովել, յես չեմ հասկանում: Շատ լեզվական թերություններ եմ նկատել: Որինակ՝ «Անսպասելի բաղդ» թղթակցություն մեզ աշակերտի մի արտահայտություն կա «գլխի չի ընկնում ընկնել»: Շատ տեղ է ասված: Ուրիշ շատ սխալներ ել կան: Մի տեղ «կենեմ» բառը գրված է միասին, իսկ մի ուրիշ տեղ՝ «կը քենեմ»: Թղթակցություններում հաճախ է կրկնվում «յես» բառը: «Ծիծաղի անկյունում» գործնական բան չկա: Ծաղրանկարները տեղին չեն: Դրված է Նասոյայի մասին, իսկ ծաղրանկարը կուլակ է ներկայացնում: Վատ է նաև այն, մյուս միևնույն մարդու մասին թերթի միևնույն համարում մի քանի անգամ է գրված:

Յուրաքանչյուր խմբագրական կոլեգիա պետք է լույս ընծայած համարի բովանդակության այսպիսի գործնական քննադատություն կազմակերպի: Կարելի չէ այդպիսի ժողովներ նշիլ: Վոչ թե միանգամից բոլոր հարցերին, այլ մի մոռեն կարևոր խնդրի, որինակ՝ քննել պատի թերթի լեզվի զրադիտությունը, կամ թերթի տեխնիկական ձևավորման վերակը:

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Պատի թերթի խմբագրական կոլեգիայի խնդիրներից մեկն է շարունակ պարզել կոլտնտեսական մասնաճյուղերի կարծիքը թերթի բովանդակության մասին, պարզել, թե տվյալ համարում կոլտնտեսականներին ի՞նչն է դուր յեկել, ինչը՝ վոչ: Այդ այնքան էլ հասարակ գործ չէ: Ամեն մի կոլտնտեսական ել չի կարող անմիջապես իր կարծիքն ասել: Զբաղուն վերաբերմունք է հարկադր: Ահա թե ինչու պատի թերթի խմբագիրն ու խմբիկի անդամները համարը լույս ընծայելուց հետո բացի կոլեկտիվ ընթերցում կազմակերպելուց նաև զրույցներ պիտի ունենան առանձին կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների հետ:

Ահա, որինակ, մորքան հետաքրքիր է կազմակերպել այդ աշխատանքը «Կոլեկտիվիստ» պատի թերթի խմբագիր ընկ. Զե-

մլայանսկին (Կաղախատանի Ուստ Կամենոգորսկի շրջանի Ուչաևո-
վի անվան կոլտնտեսություն) :

Նա հաճախ զրույցներ եր կաղմակերպում կոլտնտեսականնե-
րի փոքրիկ խմբերի հետ այն թեմաների շուրջը, վորոնք նախա-
տեսվում էին լուսարանել պատի թերթում : Ահա թե դրա մա-
տին ինչ է պատմում նա .

«Յես այսպես եմ աշխատում, կարդում եմ «Պրավդա»-ն :
Նրա մեջ այսօր, ասենք թե, սրված է կուսակցության վո-
րոշումների պրոպագանդայի հարցը : Իսկույն մտածում եմ՝
իսկ ինչպե՞ս է դրուկվում մեր կոլտնտեսությունում : Այդ
հարցի շուրջը նյութեր եմ հավաքում, զրուցում եմ կոլտն-
տեսականների հետ, իսկ հետո դրում եմ շրջանային թեր-
թում, թե մեր կոլտնտեսությունում ինչպես է տարվում
կուսակցության վորոշումների պրոպագանդան :

Ահա, որինակ, յես կարդացի ընկեր Ստալինի ճառը :
Ի՞նչ եմ անում : Նախ ուսումնասիրում եմ այդ ճառը, ապա
հավաքում եմ վիսադրադես կոլտնտեսականների մի խումբ
և նրանց համար կարդում եմ այդ ճառը, միաժամանակ
որինակներ բերում մեր կոլտնտեսության ու շրջանի կյան-
քից :

Ընկեր Ստալինի ճառի մասին կոլտնտեսականների հետ
ունեցած այդպիսի զրույցների ժամանակ շատ առաջարկու-
թյուններ են արել, ինչպես որինակ՝ այն մասին, թե մեզ
մոտ ինչպես պետք է ճիշտ ցանքաշրջանառություն կատա-
րել, բարձրացնել բերքատվությունը, գործադրել պարար-
տանյութեր, ավելացնել անասունների քանակը, ծավալել
կուլտուրական շինարարությունը :

Շատ հետաքրքիր առաջարկություններ են արվել : Հի-
շում եմ, դրանցից մեկը՝ կուլտուրական տնտեսականների
մասին, մենք տեղավորեցինք պատի թերթում և անմիջա-
պես կոլտնտեսականներն արձագանքեցին դրան : Վարչու-
թյունն ընդառաջեց մեզ և այժմ մենք կառուցել ենք կուլտու-
րական դաշտակայաններ՝ իրենց ուղիղ-սարքավորումով :

Մեկ գյուղթղթակցի ուժից վեր է մեր կոլտնտեսային
յեռուն կյանքի բոլոր հարցերը բարձրացնել : Յես աշխատում
եմ ավելի մեծ թվով ահտիվ համախմբել թերթի շուրջը :

Վորպես «Կուլեկտիվիստ» պատի թերթի խմբագիր՝ յես հա-
վաքում եմ ահտիվ հասարակական աշխատողներին՝ քննար-
կելու առանձին հարցեր ու առաջարկություններ, վորոնք
անհրաժեշտ է լուսարանել պատի թերթում : Հենց այդտեղ
եւ թղթակցություններն են կազմվում :

Կուլեկտիվ ջանքերով մենք թերթում շատ լուրջ հարցեր
ենք բարձրացնում : Մեզ հարկավոր էր հերկն արագացնել :
Առաջարկեցինք յերեքհերթյան վար կաղմակերպել, այնպես,
վոր միայն ձիերը կերակրելու համար ընդմիջում արվի : Այդ
միջոցով մենք հասանք արտադրանքի նորմայի բարձրացման
և հերկի արագացման : Սկզբում գյուղացիներն այս փորձն
իրենց բրիդադում կատարեցին, իսկ հետո այն փոխադրե-
ցին նաև մյուս հողամասերը :

Այսպես, քուրաբանչուր խմբագիր գյուղքաղպիցների խմ-
բոջ կուլեկտիվի ոգևորչամբ պետք է լույս ընծայի պատի թեր-
թը :

ԽՄԲԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մեր պատի թերթերից շատերի խմբագիրները մոռանում են,
վոր խմբագրական կուլեկտիվն պարտավոր է ժամանակ առ ժա-
մանակ հաշիվ տալ իրենց ընտրող կոլտնտեսականների ընդհա-
նուր ժողովում : Խմբագրի, ինչպես նաև խմբագրական կուլեկտի-
վի անդամների հաշվետվությունը՝ թերթում կատարած իրենց
աշխատանքների մասին, թերթի ճիշտ աշխատանքի ամենաան-
հրաժեշտ պայմանն է :

Խմբագրական կուլեկտիվի հաշվետվությունը կոլտնտեսա-
կանների առաջ՝ հարկավոր է մասսաների հետ կապն ուժեղաց-
նելու համար, նրա համար, վոր իրենք՝ կոլտնտեսականները քն-
նադատեն թերթը, իրենց առաջարկություններն անեն նրա աշ-
խատանքների բարելավման համար :

Պատի թերթի աշխատանքների մասին ղեկավարումները և հաշ-
վետվություններն այնպես աշխուժ պետք է տալ, վոր կոլտնտե-
սականներն ել՝ ավելի մեծ չափով հետաքրքրվեն թերթով, եւ
ավելի մեծ հետաքրքրություն հանդես բերեն դեպի այդ գործը :

Այդպիսի կենդանի ձև է հանդիսանում՝ որինակ ընթերցող-

ների ժողովը: Այդպիսի ժողովի նպատակն է՝ լայնորեն ծավալել քննադատությունը, ամբողջ բերեալին մասնակից անել թերթի համարների պլանի և նրա հետագա աշխատանքների քննութեանը:

Ընթերցողների այդ ժողովները պետք է գործնական բնույթ կրեն, առանց աղմկարարութեան: Պատի թերթի խմբագրական կոլեգիան կուսկազմակերպչի, բերեալի ղեկավարութեամբ իր ընթերցողների ուղղորդութեանը պետք է կենտրոնացնի իր աշխատանքի գործնական հարցերի վրա:

Հատուկ ուշադրութեան պետք է դարձնել այդպիսի ժողովի հրավիրման նախապատրաստութեան վրա: Այնտեղ, ուր ժողովը շուտափույթ է հրավիրվում, միշտ ել անբավարար արդյունքներ են տալով: Յերբեմն կոլտնտեսականները նույնիսկ չեն իմանում, թե ինչ ասեն թերթի մասին, ինչ է պահանջվում իրենցից: Ահա թե ինչու անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել ընթերցողների շահերը, հասնել այն բանին, վոր կոլտնտեսականները ժողովի գան նախապատրաստված:

Խորհուրդ ենք տալիս մինչև ընթերցողների ժողովն ակամբելը դրույցներ կազմակերպել կոլտնտեսականների հետ—յերիտասարդութեան հետ առանձին, հասակավոր, փորձառու կոլտնտեսականների հետ առանձին, կոլտնտեսութեան ղեկավարների հետ առանձին: Անպայման պետք է պարզել, թե հասկանալի՞ յե արդյոք պատի թերթի լեզուն կոլտնտեսականներին, ի՞նչ թղթակցութեաններ են կարգացել նրանք և այդ թղթակցութեաններում ինչ բան է դուր յեկել նրանց, ինչ հարցեր թերթը դեռևս չի լուսաբանել: Կոլտնտեսականը թերթի առաջարկութեաններից փորձ է առանձնապես արժեքավոր համարում, ի՞նչու իրենք չեն դրում պատի թերթին, ի՞նչ են առաջարկում խմբագրական կոլեգիայի աշխատանքների բարելավման համար:

Ընթերցողների ժողովն անց է կացվում այսպես: Սովորաբար ժողովն օրվում է պատի թերթի խմբագրի կարճ զեկուցումով՝ կատարված աշխատանքի մասին: Խմբագիրը պատմում է, թե թերթն ինչպես է պայքարել պլանի կատարման համար, կուսակցութեան ու կառավարութեան վորոշումների կենսագործման համար: Նա անպայման պետք է ասի, թե խմբագրական կոլեգիան կոլտնտեսականներին ինչպես է քաշել այս կամ այն կամ պանիայի մեջ, կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից ով

ինչպես է մասնակցում պատի թերթին, ինչպիսի աշխատանք է կատարվում նամականիքի վրա, թերթի սկսած բոլոր գործերն են արդյոք մինչև վերջ հասցվել, ի՞նչն է խանգարում պատի թերթի աշխատանքներին: Լայնորեն պետք է լուսաբանել, թե ինչ միճակում են գտնվում ընթերցողների տված նախկին առաջարկները:

Պատի թերթի քննադատութեան ու կոլտնտեսականների կոնկրետ առաջարկութեաններն անպայման պետք է իրենց արտացոլումը գտնեն պատի թերթի հետագա աշխատանքների մեջ:

ԽՈՒՍԱՓԵԼ ՍԽԱԼՆԵՐԻՑ

«Ուղարնիկ» պատի թերթը (Կուլբիչևի յերկրամասի «Կրասնի» կոլտնտեսութեան) աղբարարել է իրենց կոլտնտեսութեան յերկրորդ ողակի վատ աշխատանքի մասին և նրանց բարձրացրել սև խախտակին: Առաջնութեան խմբագրի մոտ է գալիս ողակավարը և վրդոված հայտարարում, թե իր ողակը գերակատարել է պլանը և ամենևին արժանի չէ սև տախտակին բարձրանալու: Խմբագիրն ատուգում է այդ ողակի ցուցանիշները և համոզվում, վոր, իրոք, յերկրորդ ողակն առաջավոր ողակ է: Պարզվում է, վոր թղթակցութեանն արտագրելիս «առաջին ողակ» բառերն անփութութեան հետևանքով դարձվել են «յերկրորդ ողակ»:

«Այդ չնչին բան է» — պատասխանում է խմբագիրը յերկրորդ ողակի ողակավարին:

Սակայն յերկրորդ ողակի կոլտնտեսականները չեն համաձայնում թերթի ողակի նկատմամբ ցուցաբերած այդպիսի թեթևամիտ վերաբերմունքին: Նրանք խմբագրի դեմ բողոք են տալիս կազմակերպչին: Կուսկազմակերպչը պնդում է, վոր թերթն ուղղում տեղավորի և հրապարակորեն պարզի իր սխալը:

Ի հարկէ, խմբագիրն այստեղ իրավացի չէր: Պատի թերթն անմիջապես, հենց նույն, կամ հաջորդ համարում պետք է ուղղի իր սխալները: Ճիշտ են վարվում այն խմբագրական կոլեգիաները, վորոնք թղթակցութեան մեջ սխալ հայտաբերելով՝ նորից են սպում այդ թղթակցութեանն ուղղված ձևով և ավելացնում են խմբագրական կոլեգիայի բացատրութեանը, թե ինչու և ում հանցանքով է կատարվել սխալը: Իր սխալի բացա-

հայտ ու արագ ընդունումն ամենեւին չի վնասում պատի թերթին, այլ ընդհակառակն, ուժեղացնում է նրա գործոնությունը, բարձրացնում է նրա հեղինակությունը:

Ուղղումներ պետք է տեղավորել վոչ միայն թվերի և աշխատանքի գնահատության բացարձակ սխալների առթիւ, այլև առանձին անփութ ձևակերպումների, անգրագետ արտահայտությունների առթիւ: Պետք է հիշել, վոր շատ կոլտնտեսականներ թերթով են գրել կարգալ սովորում: Մի պատի թերթ անգրագիտություն է թույլ տալիս: Որինակ փոխանակ «աշխատանք» գրելու գրում է «ախշատանք», «կուսակցության» փոխարեն՝ «կուսացկության» և այլն:

Պարզ է, վոր այդ թերթն անգրագիտություն է անբանում: Յեթե պատի թերթի խմբագիրն այդպիսի անգրագիտություն է նկատում, նա պարտավոր է ուղղում տեղավորել այդ մասին: Սմբադրական կոլեգիայի կատարած սխալները պետք է քննարկվեն գյուղթղթակիցների կողմից: Պետք է քննադատել թույլ տրված սխալների կոնկրետ հեղինակներին:

Պատի թերթի բովանդակության մեջ սխալներ ու անփութություն են լինում այնտեղ, վորտեղ բուն են գրել անպատասխանատվությունն ու քաղաքական տհասությունը: Յերբեմն այդ անպատասխանատվությունը քաղաքական կոպիտ սխալների պատճառ է դառնում: Այստեղ միայն ուղղում տալով գործը չի շտկվի: Քաղաքական սխալներից ավելի լուրջ դասեր պիտի առնել: Անհրաժեշտ է խմբագրական կոլեգիայի աշխատանքների մեջ բարձրացնել քաղաքական զգոնությունը, իր մեջ՝ պատասխանատվության զգոնություն մտցնել յուրաքանչյուր տողի, յուրաքանչյուր բառի համար, վոր տպագրված է պատի թերթում:

Հաճախ պատի թերթում տեղավորված թղթակցությունների մասին հերքում են բերում խմբագրական կոլեգիա: Ինչպե՞ս վարվել այդ հերքումների հետ:

Այդ հարցը շատ պատի թերթի խմբագիրներին յե հետաքրքրում: Չե՞ վոր լինելու յեն տարբեր հերքումներ—ճիշտ և սխալ:

Նախ քնենք, թե ինչպե՞ս վարվել ճիշտ հերքումների հետ: Այդպիսի հերքումն անպայման պետք է տեղավորել: Ի՞նչու յեն գրվում այդպիսի հերքումները: Դրանք հանդիսանում են սխալ, սուտ թղթակցությունների պատասխանը, վորոնք թյուրիմացության մեջ են գցում կոլտնտեսային հասարակայնությանը: Պա-

տահում է, գյուղթղթակիցը չստուգված փաստ է հաղորդում և խմբագրական կոլեգիան առանց ստուգելու հրատարակում է թերթում այդ անճիշտ տեղեկությունը: Պատահում է նաև, վոր ինքը՝ խմբագրական կոլեգիան է մեղավոր լինում հարցի անճիշտ դրվածքի համար:

Այդ բոլոր դեպքերում խմբագրական կոլեգիան պարտավոր է հերքում տեղավորել և շտապ ուղղել պատի թերթում թույլ տված իր սխալները:

Պատի թերթին սխալ հաղորդող զրպարտիչները պետք է խստորեն պատժվեն, նրանց վոչ միայն պատի թերթում խիստ քննադատության պիտի յենթարկել, այլ և դատի տալ զրպարտության համար:

Իսկ ի՞նչպե՞ս վարվել, յերբ խմբագրական կոլեգիան սխալ հերքում է ստանում: Այդպիսի դեպքեր քիչ չեն: Որինակ՝ պատի թերթը քննադատում է լողերին: Նա շտապում է հերքում գրել, վորով առանց վորեն ապացույցի հավատացնում է, թե իրեն զրպարտել են, թե ինքն ամենեւին ել լողը չէ: Սմբադրական կոլեգիան մի անգամ ևս պետք է ստուգի թղթակցության ճշտությունը և յեթե այն հաստատվում է, ապա պարզ է, վոր լողերի հերքումը չպետք է տպել:

Սմբադրությունը պետք է պնդի, վոր այդ կոլտնտեսականը, վորի աշխատանքի թերությունների մասին ճիշտ կերպով գրվել է թղթակցության մեջ, ձեռնամուխ լինի իր թերությունների ուղղմանը:

Իսկ այն դեպքում, յերբ սխալ հերքում գրող մարդը համառորեն պահանջում է տպագրել թերթում, խմբագրական կոլեգիան պետք է մի նոր թղթակցություն տպի, վորը նոր փաստերով հաստատի այդ մարդու թերությունները:

Մյուս բարդ գործերը, վորոնք խմբագրական կոլեգիան իր ուժերով չի կարող քննել, պետք է մինչև վերջը հասցնի՝ դիմելու կուսակցական կազմակերպության, չրջնային և կենտրոնական թերթերի ոգնությանը: Պատահում է, վոր պատի թերթի խմբագրությունն ստանում է անստորագիր նամակ, վորտեղ նըշված չի լինում, թե ո՞վ է նրա հեղինակը: Ի՞նչ անել այդպիսի նամակները: Հեղինակը հայտնի չէ, հասցեն՝ նշված չէ:

Բացահայտ զրպարտիչ անստորագիր նամակները, հասկանալի

յե, վոր անպետք պիտի համարվեն. այդպիսի նամակները թեր-
թում տեղավորել չի կարելի:

Բայց լինում են և այնպիսի անստորագիր նամակներ, վորոնք
մերկացնում են վորեւե աշխատակութիւն, հանցագործութիւն,
կամ կուսակցութեան դժի աղալագում: Այդպիսի նամակներին
ուշադիր պետք է վերաբերվել, թեկուզ և նրանք անստորագիր
լինեն: Խմբագիրն ըստ ելութեան պետք է քննի, թե տվյալ թղթ-
թակցութիւնը, տվյալ նամակը ճիշտ է լուսաբանում փաստե-
րը, թե՞ սխալ:

Մի պատի թերթի խմբագրութիւն մի անստորագիր նամակ
եր ստացել, վորի մեջ հաղորդվում էր, թե կոլտնտեսութեան նա-
խագահը թաղցնում է իր տրոցկիստական անցյալը: Խմբագիրն
նամակը հանձնեց կուսկազմակերպչին: Կուսկազմակերպչին այդ
անստորագիր նամակն ստուգեց: Փաստերն ապացուցվեցին: Պա-
տի թերթի հետեյալ համարում, մյուս նյութերի հետ միասին,
տեղավորվեց նաև այդ նամակը, կուսկազմակերպչի ստորագրու-
թյամբ:

Այդպիսով, պատի թերթի համարի լույս ընծայումը և այդ
համարի շուրջը կատարվող աշխատանքը դաստիարակչական խո-
շոր նշանակութիւն ունի: Պատի թերթի համարի լույս ընծայու-
մով աշխատանքը չի վերջանում: Համարի լույս ընծայումից հե-
տո, շարունակվում է պատի թերթի կազմակերպչական մասնա-
յական և դաստիարակչական աշխատանքը: Այդ ստեղծագործա-
կան խոշոր գործ է և վոչ մի ընդհանուր բան չունի պատի թեր-
թի լույս ընծայման նկատմամբ յեղած այն թեթեամբալ վերաբեր-
մունքի հետ, թե՛ «թերթը գրեցի, բեռն ուտերիցս ցած ընկավ»:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է խմբագրական կոլեգիայի դերը՝ պատի թերթի
համարը լույս ընծայելու գործում:

2. Ձեր կարծիքով ի՞նչպէս ավելի լավ կլինի պարտականու-
թիւնները բաժանել խմբագրական կոլեգիայի անդամների միջև:

3. Ի՞նչ դեր է խաղում պատի թերթի պլանային աշխատանքը
և ինչ դրութեան է հասցնում պլանի բացակայութիւնը: Որի-
նակներ բերեք ձեր փորձից, ինչու՞ պատի թերթի այս կամ այն

համարն ավելի հետաքրքիր ու ավելի լավ ստացվեց և ինչու՞
մյուս համարն ավելի սխալ ստացվեց:

4. Ի՞նչպէս կազմել պատի թերթի պլանը:

5. Ի՞նչ պետք է անել խմբագրական կոլեգիայի նիստերում:

6. Ի՞նչ պետք է անել պատի թերթի հերթական համարը
լույս ընծայելուց անմիջապէս հետո:

7. Պատի թերթի գործոնութեան համար մղվող պայքարում
ի՞նչպիսի նշանակութիւն ունի թերթում տեղավորված թղթակ-
ցութիւնների քննարկումը կոլտնտեսականների արտագրական
խորհրդակցութիւններում:

8. Պատի թերթի գործոնութեան համար, ի՞նչ նշանակու-
թիւն ունի հարցերի կոնկրետ լուսաբանումը:

9. Պատի թերթի գործոնութեան համար ի՞նչ նշանակութիւն
ունի նրա հաճախի ու կանոնավոր լույս ընծայումը:

10. Հետեյալ հերթական համարները լույս ընծայելու գոր-
ծում ի՞նչ նշանակութիւն ունի արդեն իսկ լույս ընծայած հա-
մարի քննադատութիւնը և ի՞նչպէս կատարել այդ քննադատու-
թիւնը խմբագրական կոլեգիայի ներսում, գլոբալ թղթակիցների
ու պատի թերթի ընթերցողների մեջ:

11. Ի՞նչպէս վարվել պատի թերթը լույս տեսնելուց հետո
ստացված հերքումների հետ— այն դեպքում, յերբ հերքումը
ճիշտ է և այն դեպքում, յերբ հերքումը ճիշտ չէ:

12. Ինչպէս խուսափել պատի թերթում սխալներ անելուց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1. Կազմեցեք ձեր պատի թերթի պլանը մոտակա ամ-
սի համար, հաշվելով, վոր ամսական 5 համար է լույս ընծայ-
վելու: Այդ պլանը ձեզ հետ բերեք սույն դասախոսութեան ուսու-
մնասիրութեանը նվիրված սեմինար պարապմունքին: Այդ սեմի-
նարում քննեցեք, թե ում կազմած պլանն է ավելի հաջող ստաց-
վել:

2. Ձեր բերեալում թողով գումարեցեք՝ նվիրված ձեր պա-
տի թերթի վերջին 3-4 համարի քննադատութեանը:

3. Նայեցեք, թե, ձեր խմբագրական կոլեգիայի անդամների
մեջ ինչպէս է բաժանված աշխատանքը և յեթե ճիշտ չի բաժան-

ված, քննեցեք այդ հարցը և, այս դասախոսութեան խորհուրդ-
ներն ոգտագործելով՝ վերակառուցեցեք խմբադրական կոլեգիայի
աշխատանքն այնպես, ինչպես ավելի լավ կլինի գործի համար:

4. Մեզ թղթակցութիւն գրեցեք այն մասին, թե այս դա-
սախոսութիւնն ուսումնասիրելուց հետո ձեր աշխատանքի մեջ
ինչ փոփոխութիւն եք մտցրել: Այդ թղթակցութիւնն ուղարկե-
ցեք «Խորհ. Հայաստան»-ի խմբագրութիւն, հեռակա դասնթաց-
ների ղեկավարին: Գրեք նաև, թե պատի թերթի լույս ընծայ-
ման գործում ինչ մուլթ հարցեր են մնացել ձեզ համար:



332

14657

ՏԲՊՈՒՄ Ե ԶԳԻ

С. ДАНИЛИН

Выпуск номера стенной газеты

Издательство КП(б)А—„Хорурдайин Айастан“